«Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ 3-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

26.02.2021թ. **ք.Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2021 թվականի փետրվարի 23-ին, ժամը 11:00-ին տեղի ունեցավ «Ռիտուալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի Մուսաբեկ փողոց թիվ 14 հասցեում նախատեսվող գերեզմանատան կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ 3-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Քոչարյանը, Վեոլիա Ջուր ՓԲԸ «Կապան» տեղամասի պետ՝ Հ. Գևորգյանը, «Խուստուփ» բնապահպանական ՀԿ նախագահ՝ Վ. Մարտիրոսյանը, ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դասախոս՝ Լ. Պետրոսյանը Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ՝ Ս. Սարգսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2021 թվականի փետրվարի 10-ի համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց «Ռիտուալ» ՍՊԸ ներկայացուցիչ՝ Արմենակ Սիմոնյանին:

Զեկույց (Արմենակ Սիմոնյան)- Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի՝ արդեն իսկ իրականացվել են երկու հանրային քննարկումներ, որոնց արդյունքում շրջակա միջավայրի նախարարությունը տրամադրել է տեխնիկական առաջադրանք գնահատման հաշվետվության մշակման համար: Համաձայն նախագծի նախատեսվել է «Ռիտուալ» ՍՊԸ սեփականության իրավունքով պատկանող 3.7 հա հողամասի 1 հեկտարի կտրվածքով կազմակերպել գերեզմանատան կառուցում: Գերեզմանատների չափերը՝ 3×4, նախատեսված է նաև մեքենաների մուտքը դեպի գերեզմանատներ տանող ճանապարհ: Տարածքը կցանկապատվի, կկառուցվի մեկ հարկանի սրահ, պահակատուն և սանհանգույց: Ազդեցությունը շրջակա միջավայրի վրա պայմանավորված է շինարարական աշխատանքներով: Նախատեսվում է ցածրահարկ

կառուցապատում: Շինարարական աշխատանքների արդյունքում մթնոլորտում արտանետումների քանակը կապված է շինարարական տեխնիկայի շարժիչների և փոշեառաջացման հետ: Կատարվել են մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակային հաշվարկներ: Հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ, հարկ է նշել, որ աշխատանքների արդյունքում առաջացող արտանետումները չեն կարող թողնել զգալի ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Հաշվետվության մեջ ներկայացված են այն միջոցառումները, որոնք պատշաճ իրականացնելու դեպքում հնարավոր կլինի մեղմել և նվազագույնի հասցնել հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա: Շահագործման փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցություն չի ակնկալվում:

Կարծիք (Լեոնիկ Պետրոսյան)- Կարծում եմ, որ այս խնդիրը շատ արդիական է: Գերեզմանատան տրված ստանդարտ չափերը տեղին են, այդ տեսանկյունից շատ ճիշտ է: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը շինարարական աշխատանքների արդյունքում ժամանակավոր են, ծանր մետաղներ չեն: Վնասակարության լուրջ աստիճան ինքս չեմ տեսնում: Բնակավայրերից էլ բավականին հեռու է, որևէ խնդիր չեմ տեսնում: Նույնպես գտնում եմ, որ գերեզմանատան կառուցման խնդիրը արդիական է և հնարավորինս պետք է աջակցել, որ նման ծրագիրը իրագործվի:

Կարծիք (Վլադիկ Մարտիրոսյան)- Նախկին երկու հանրային քննարկումներին մասնակցել եմ, նախագծին ծանոթ եմ: Բնակավայրերից հեռու է, կարևորը խմելու ջրի աղբյուրներից հեռու է: Օրինակ՝ չի կարելի գերեզմանատներ կառուցել այնտեղ, որտեղից ջրահավաք մակերեսն է ձևավորվում խմելու ջրի համար: Հետագայում փոշիներից պաշտպանվելու համար պայմանավորվել ենք, որ ծառատունկ կարվի: Ամբողջը նախագծով գծված հստակ ճիշտ է: Հարիր, ստանդարտ գերեզմանատուն է լինելու և մեքենայով էլ մոտենալու խնդիր չի լինելու: Սա թեև ուշացած միջացառում է, բայց շատ ողջունելի է և պետք է աջակցենք այս ծրագրի իրագործմանը:

Ամփոփում (Սերգեյ Սարգսյան)

«Ռիտուալ» ՍՊԸ կողմից նախաձեռնված ծրագիրը ողջունելի է, արդիական, կթեթևացնի բնակիչների հոգսը: Շնորհակալություն բոլորին մասնակցության համար:

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

«Ռիտուալ» ՍՊԸ տնօրեն **Արման Քոչարյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի գյուղ.
և հողօգտագործման բաժնի պետի ժ/պ **Սերգեյ Սարգսյան**

Արձանագրող՝ Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Արմինե Սահակյան**